ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

«ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիր

EU4Business ITTD

Իրականացման ժամանակահատված: 01.11.2020 - 30.04.2023

ԱԼԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 15 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

DEUTSCHE GESELLSCHAFT FUR INTERNATIONALE ZUSAMMENARBEIT (GIZ) GMBH

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

facebook.com/EU4BTourismArmenia;
facebook.com/EU4BTechArmenia/;
https://twitter.com/EU4BTechArmenia;
https://twitter.com/EU4BTourismArm,

Նախագծի կայքէջ: eu4business-tourism-tech.am/en

Նախագծի նկարագրություն:

«ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիրը մեկնարկել է 2019 թ. նոյեմբերին և կշարունակվի մինչև 2023թ. ապրիլը:
Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից: Այն իրականացվում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) կողմից՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» բազմաբաղադրիչ ծրագրի ներքո: Ծրագիրը հադիսանում է Եվրոպական միության «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության (www.eu4business.eu) մաս:
Ծրագրի ընդհանուր նպատակն է ապահովել միասնական, հավասարաչափ և համապարփակ աճ՝ խթանելով զբոսաշրջությունը և նորարարությունը: Դա հնարավոր կլինի իրագործել ա) Հայաստանի հյուսիսային շրջաններում նորարարական, փոխակերպումներ առաջ բերող զբոսաշրջային ձեռնարկությունների հիմնման, բ) բարձր տեխնոլոգիաների և նորարարության բնագավառում գործող ձեռնարկություններին աջակցության տրամադրման գ) բարձր տեխնոլոգիաների ոլորտում հետազոտություններ իրականացնող գիտնականների միջև, միջազգային մակարդակում փորձի փոխանակման, ինչպես նաև դ) ուսանողների և բնակչության լայն շրջանում ձեռնարկատիրական մշակույթի զարգացմանը նպաստող ցանցերի ձևավորման միջոցով:

Ակնկալվող արդյունքներ:

Ամրապնդված և կենսունակ ընկերություններ ու ստարթափեր զբոսաշրջության ոլորտում, որոնք ստեղծվել և գործում են Հայաստանի հյուսիսային մարզերում՝ Լոռիում, Տավուշում և Շիրակում՝ առաջարկելով նորարար պռոդուտկներ ու ծառայություններ տեղական ու միջազգային զբոսաշրջիկներին:
Առավել հզոր և հմուտ ստարտափեր ու տեխնոլոգիական ընկերություններ, որոնք պատրաստ են թևակոխել առաջընթացի հաջորդ փուլը՝ մուտք գործելով գլոբալ շուկաներ իրենց պռոդուկտներով և լուծումներով, ավելի շատ նորարար գաղափարների և նախագծերի ֆինանսավորում Եվրոպա Հորիզոն ծրագրի շրջանակներում, ավելի կայուն և արդյունավետ կապերի հիմնում գիտության, կրթության և ձեռներեցության միջև, ինչպես նաև նորարարության և ձեռնարկատիրական հմտությունների զարգացում երիտասարդների շրջանում համալսարանական ցանցի միջոցով: